

ՆՈՐԵԿ ՎԵՀՇԻՓԾՈՒԹՔԵՐՆ ՄՈՒՏՔԵՐ ուստի մա-

ՆՐԻՆ ՎԵՀԱՓԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՒՏՔԸ

ԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

b ト

Ա. ՕՐՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

* Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր եւ հանձք զմեզ ի համակատաւ*:

U m n. Q m , p.

Յունիսի 21 ից մինչև Սեպտեմբերի 13-ը ճանապարհորդ էինք, անցել էինք Հայաստանի ծաղկալից, հովասուն լեռները, սքանչացել վրաստանի, Խմերեթիայի ճոխ, վարթամաշ բռասկանութեամբ, լողացել Աւ, Մարմարայ, Եգեյական, Միջերկրական ծովերի կազուտակ գոհակների վրայ, Փարաւոնների մեծաշուշակ երկրի տաք, կիղիչ արեգակի տակ այրուել, ջերմեռանգութեամբ համրուրել Յիսուսի, մեր Փրկչի նուիրագործած սուրբ վայրերը և հրաւիրելով մեր Հայրապետին գալ բազմել ո. Գրիգոր Առաքաւորչի նուիրական գահը ուրախ և զուարթ հա-

“Օ ան. «Արարատի» ընթերցողները սպասում են անկասկած, որ
Վեհափառի Ճանապարհորդութեան Նկարագրութիւնը Խրուսաղէմից մինչև
և Էջմիածին տրուի նոցա, իրաւունք էլ ունին: Արդէն զբաղուած ենք
գրանով, սակայն այդ երկար ուղևորութիւնը այնքան հետաքրքիր գեպքեր
ունի, որ աւելի նպատակայարմար դատեցինք առանձին գրեռով ի լոյս հա-
նել ժամանակագրական կարգով պատմելով մի առ մի թէ հրաւիրակու-
թեան ուղևորութեան պատմութիւնը և թէ նորին Վեհափառութեան
Գալուստը, Կրա մէջ կմտնեն նաև ուղերձները կամ ամբողջութեամբ,
կամ կրծատեալ, Այս համարի մէջ կտրուի միայն այն մասը, ինչ որ եղ-
բակակել է տալիս յօդուածիս վերնագիրը:

գով, աւելի երկար ճանապարհով անցնելով Միջերկրական, Կօնիակական, Աղրիադական ծովերը Հունգարիան, Աւստրիան, գարձանք մեր ո. Էջմիածինը: Հեշտութեամբ թը-ւում ենք երկրների անուններ, Հայաստան, Վրաստան, Տաճ-կաստան, Յունաստան, Եգիպտոս Պաղեստին ևն. ևն., մոքով մի բոպէում թռչում: Ալանում ենք ամեն տեղ, բայց ի՞նչքան կեանք, ի՞նչքան փոփոխութիւն, ի՞նչքան ազգեր, լեզուներ, ի՞նչ-քան քաղաքակրթական տարբեր աստիճաններ չեն հասկացւում այդ լայնածաւալ տարածութեանց մէջ, քանի քանի տասնեակ տարիներ են հարկաւոր թէկուզ մի շատ թեթև գաղափար կազ-մելու տեսածների մասին, ոչ թէ մի ճանապարհորդութիւն, ոչ թէ մի մարդու կեանք, այլ մի քանի մարդկանց կեանք հազիւ բաւեն դրա համար: Կատարեալ իրաւունք ունէինք Ավագմոսերգուի հետ կրկնել, անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր: Երկարատև ճա-նապարհորդութիւնը, անդադար կրկնուող մէկ քան զմիւսը փայ-լուն ընդունելութիւնները, ժողովրդական մեծ ցոյցերը իւրեանց հետաքրքրութեամբ լարելով մեր ամբողջ ուշադրութիւնը, սկսել էին արդէն յոգնեցնել բոլորիս էլ, այնպէս որ երբ Տփխիսից գորս եկանք և գիտէինք թէ երեք չորս օրից արդէն ո. Էջմիածնում կլինէինք, չէր կարելի չզգալ մի տեսակ հոգեկան հանգստու-թիւն, թէ վերջապէս պիտի հանգստանանք: Ուրախ էինք, որ այդքան երկար ճանապարհորդութիւնը անցել էր խաղաղ ան-դորր, որ ոչ մի միջնադէպ, ոչ մի անախորժ հանգամնք չէր պղտորել մեր ուրախ տրամադրութիւնը. վեց հօթը օր ծովով անց-նել, օրերով նաւի մրոյ լինել և երբէք փոթորկի չհանդիպել այդ էլ մի առանձին երջանկութիւն է:

Թէ ի՞նչ փառահեղ հանգիստով լնդունեց վեհափառին ամեն աեղ հայ ժողովուրդը, գրա մանրամասն նկարագրութիւնը թող-նում ենք մօտ ապագային, մեր Ա. Էջմիածնի միաբանութեան միացած բազմաթիւ ուխտաւորների և վաղարշապատցւոց ըն-դունելութեան նկարագրութիւնն է որ այստեղ տալու ենք: Երեանից վճռուած էր ժամի 8 ին գուրս գտլ, կառքերը ու-շացան, 9 ին հազիւ ճանապարհ ընկանք: Յառաջ էր ընթանում

Վեհափառի կառքը շրջապատուած բազմաթիւ ձիաւորներով, հետեւում շարեշար կառքերով. ձիաւորների թիւը գնալով շատանումէր, մօտակայ ոյգիներից, գիւղերից միանումէին անդադար, իսկ վաղարշապատցիք Արապարու Ս. Գրիգոր եկեղեցու մօտի ըլրակին վրայ կանգնած անհամբեր սպասումէին վեհափառի մօտենալուն. հէնց որ երեաց վեհափառի կառքը ձի խաղացնելով, նիզակներ պատեցնելով, կեցցէներով օգը թընդացնելով առաջ անցան: Այդքան բազմաթիւ ձիերից և կառքերից առաջացած վոշին անհետացրեց ամեն բան, նկատուումէր միայն մի մեծ վոշու ամպ, որ երկրից դէպի երկինք էր բարձրանում: Ահադին ազմուկի միջից հազիւ էր լսւում չոխիսիմէ և Շողակաթ վանքերի զանգակների ձայնը: Զիաւորները երբեմն առաջ էին անցնում: Երբեմն կանգ առնում կեցցէներ կանչում: Անչեզ հասանք գիւղի ծայրը: Վեհափառի կառքը կանգ առաւ, այդաեղ վաղարշապատի ժողովուրդը շինել էր տուել մի փառահեղ յաղթական կամօր Անւոյ մօտ եղող Պօշավանքի նմանութեամբ՝ երեք գմբեթով զարդարուած գոյնզգոյն գրօշակներով, կանաչ ոստերով: Կամարի շրջանակի վրայ խոշոր տառերով կարդացուումէր կեցցէ չայոց չայրիկը բառերը, իսկ նոյն կամարի բարձրութեան վրայ կանգնած էին երկու հերարձակ, սպիտակ հագուստ հագած փոքրիկ աղջիկներ ձեռքներին ծաղկեայ վունջեր: Գիւղացւոց պատգամաւորութիւնը, գաւառատպետը իւր պաշտօնեաներով գիմաւորեցին կամարի տակ վեհափառին բարի եկ մազթելու իւր նախահարց և նոտիորգների նուիրական վայրը: Ա. Էջմիածնայ Մայր Աթոռը:

Կամարի շուրջը այնքան բազմութիւն կտր հաւաքուած, որ եթէ մշկը առաջին անգամ մտնելիս լինէր վաղարշապատ, նրան ոչ թէ մօտ 800 անից բաղկացած մի հասարակ գիւղ կը կարծէր, այլ հարիւր հազար բնակիչ ունեցող մեծ քաղաք: Դիմաւորելու էին եկել ոչ միայն գիւղի բոլոր մեծ և փոքրերը: Այլ նաև Երեւանից, Աղեքսանդրապոլից, շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն: Մեծ գժուարիութեամբ կարելի եղաւ վեհափառի կառքի համար ճանապարհ անել, որը առաջ էր ընթանում զանդաղ ամբոխի խուռն

բազմութեան ուղեկցութեամբ որ անրնդհատ կեցցէներ էր զում Փողոցի վրաց գալար խռո էր յանած աների պատուհանները՝ պատշգամիները զարգարած էին դրոշակներով, գորգերով, ծաղիկներից, խաղողի ողկոյզներից հիւսած փնջերով. ճեմարանի ամբողջ մեծ շինութիւնը շրջապատած էր կանաչ ոստերով, գարդարուել էր նաև մեր Մայր տաճարը, նա երկու տարի սուգ պահելուց յետոյ պատրաստուել էր բերկրապից ընդունելու իւրաժամկետիր փեսային:

Տեղապահ սրբազնի կարգադրութեամբ որոշուած է եղել Վեհափառին իջեցնել Ճեմարանի պարսպի առաջ և Ճեմարանի պարտիզով վանքին կից պարտիզի մօտով առաջնորդել Նորան դէպի ս. Տաճարը: Վեհափառի հեռագրի հիման վրայ փոխուած էր այդ կարգադրութիւնը: Վեհափառը յայտնեց Երևանում: «Տփխիսի, Երևանի փորձերը մեզ վարպետ արին, հեռագրելու է Վամիածին, որ Հանդիսակատարութիւնը շատ մօտէն սկսեն, մէկ էլ աշխատեն խիստ կարգ պահպանել»: Ըստ այս հրամանի կառքը կանգ առաւ Վանքի պարսպի դարբասի առաջ, որտեղ կանգնած էին բոլոր միաբանները շուրջառներով, Ճեմարանի երգեցիկ խումբը և անշափի բազմութիւն, իսկ Ճեմարանի սաները կանգնած էին ամբողջ ճանապարհի վրայ կարգ պահելու համար: Ոչ խնդիրքով, ոչ կոչումով, ոչ նոյն իսկ մարակներով հնար կար ամբոխին յետ պահել, որ լցուած բուռն ցանկութեամբ մի բոպէ առաջ տեսնել իւր Պաշտելի Հայրապետի երեսը, առանց անսալու մի որևէ հրամանի, ներքին ոյժով առաջ էր մղւում:

Ամբոխը ծովացել էր, նրա ալիքները մարդկային ներքին յուղմամբ ալեկոծեալ դիմումէին դէպի նառը և այստեղ իջնելով յետ մղւում: Հիանալի էր տեսարանը, բոպէն ոգևորիչ: Իսկ բռնրի պատճառը, նա առաջ էր գնում հանգարդ քայլերով, յուղուած, մտախոհ պտուեցնումէր իւր արծուի հայեացքը դէպի շուրջը և դարձեալ մաքերի մէջ սուզուում: Անթիւ բերաններից «կեցցէ» բարեմաղթութիւնն էր լսուում: զրա առաջ անլոելի էր տաճարի զանգազների զողանջիւնը, անլոելի էին նաև երգք շարականաց: Զայն բազմաց, ձայն Աստուծոյ: Ճողովուրդը այդ լու-

պէին մի աղօթք, մի խնգրուածք ունէր, որ իւր սիրելին, իւր ընարեալ Հայրապետը, կեցցէ, կեցցէ երկար, երկար առթիներ, որովհետեւ նու անհուն անսահման կերպով հաւատացած է, որ այդ կեանքը կարող է իւր ցանկութեանդ կատարումն առաջ նրան բարոյապէս և հոգեապէս միսիթարել, նրա բիւրաւոր ցաւերին գարման անել, ժողովուրդը բոււն, զգացուած, սրտարուխ աղօթքում էր, իսկ ում համար ի վեր էին բարձրանում այդ աղօթքը, Կանոնին խորին, անկեղծ, ջերմ կերպով հաւատացած համոզուած է, որ այդ աղօթքները լսելի կլինեն Ամենաբարձրեալի առաջ:

Նոգին, փոշին, խորին յուղմունքը այնքան հոգնեցրել էին Վեհափառին, որ չկամեցաւ շուրջառը վրան առնել Տաճար մտնելիս: Խջան տեղի առաջ աղօթեց նու սրտարուխ ծունդ իջած, գլուխը խոնարհեցրած երկար համբուրեց սուրբ տեղը: Այդպիսի բոպէներում մարդուս լեզուն անզօր է արտայայտելու ներքին զգացմանքները: Վեհափառը կարողացաւ արտասանել: «Շուտ ճանապարհ բացէք, երթանք հանգստանանք: Երբ Վեհափառ բարձրացաւ, երբ բազմեց մեր Ա. Հայրապետների նուիրական աթոռը, տեսնելով նրան ողջ առողջ, առանց վտանգի և փորձանքի տեղ հասած, խորին զգացմամբ կրկնեցինք: Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և հաներ զմեզ ի հանգիստ:»

Հայրիկը հասաւ տեղ, հանգստացաւ: ամբոխը խոնուած սպասում էր, նա օրեր էր սպասել, ինչպէս հեռանար առանց իւր կաթուղիկոսի և աջն առնելու: Ժողովուրդը երբեմն անկարելի բան է պահանջում: այնքան երկար ճանապարհորդութիւնից յետոյ գիմանալ, որ հազարաւորներ գան աջ առնելու, անհնար է: ստկայն ժողովուրդը գիտէ նուև համբերել, Վեհափառի բակում համախմբուած համբերութեամբ սպասում էր նորա երեալուն: Նրա տեսնելու բախտին արժանացան շատ քչերը, իսկ մնացած մասը բաւականացաւ առժամնակ հանդիսաւես լինելու այն փայլուն հրախաղութեանը, որ տեղի ունեցաւ երեկոյեան Վանքի բակում:

Գոյնզգոյն լապտերներով, հարիւրաւոր ճրագներով զարդարած

Էին Վեհարանի, սեղանատան պատերը, միաբանից խցերի առաջները, հրապարակը, Վանքի զանգագատունը, վերջինիս վրան կը պցը էին մի քանի խորհրդաւոր նկարներ, արձանագրութիւններ: Զանգագատան արևմտեան մուտքի գլխին գրած էր « Եղմիածին ի Հօրէ Եւ լոյս փառաց ընդ նմա » յայտնի շարականի սկզբնատողերը, սրանից բարձր նկարուած էր Հայրապետական թագն ու գաւազանը երկու հրեշտակների ձեռներում: իսկ տակին նկարած էր մի արծիւ, որը սլանում էր դէպի Հայրապետական նշանները՝ թագն ու գաւազանը: Նկարին կցած էր հետեւեալ ստանաւորը:

« Աստուած սրտագէտ

Պահեա զամս ձիգ

Զմեր Հայրապետ

Մկրտիչ Հայրիկ »:

Զանգագատան հարաւային կամարի տակ գրած էր,

« Ազգային այս տուն

Կացցէ Հաստատուն »:

Հիւսիսայինի տակ,

« Աստ էջ Միանին

Հիմն էարկ տաճարին »:

Նկարներ կոյին նաև Վեհարանի պատերի վրայ: Այդ բոլորը հարիւրաւոր գոյնզգոյն լոյսի տակ մի տեսակ զիւթական կեր պարանք էր ստացել: Դրան միախառնուում էր չեմարանի աշակերտների երգը, աշուղների խաղը, գիւղացիների լէլէները, զինարական երաժշտութիւնը, անըդհատ արձակուող հրափամիուշուների արաքարագոյը: Ճողովուրդը ցնծութեան մէջ էր, նո ոսնում էր իւր ընտրած Հայրապետի շնորհաբեր գալուստը:

Դիշերը վրայ էր հասել, վանքի բակը գարդակուել էր, միաբանները քաշուել էին իրենց խուցերը, ուխտաւորները հեռացել իրենց օթևանները, բայց ժողովրդական գափ ու զուռնան, նրա ուրախութիւնը շարունակում էր գիշերն ի բուն:

Միւս օր՝ երեքշարթի միաբանութիւնը սպասում էր մաղթանք կատարել և ապա ներկայանալ Վեհափառին: Ըստ սովոր:

բութեան այդ մաղթանը հետևեալ ձեռով է կատարուելիս հղել։ Հայրապետը նստել է աթոռի վրայ Վեհարանի պատուհանի առաջ, մօտը կանգնած մի կամ երկու եպիսկոպոս։ Ժամկոչը մի ժամ սկառարագը սկսուելուց առաջ խփումէր երրորդը միաբանները խցերից գուրս գալով, փիլոններ գցած հաւաքումէին և հանգէստի գնում՝ վեհարանի բակը ուր կատարուում էր մաղթանք և ապա վեհարան գնալով իւր Հայրապետի աջն էր առնում։ Վեհափառը այս անգամ ինքն էլ եկաւ եկեղեցի և իւր ներկայութեամբ կատարուեց մաղթանքը։ Վեհափառը սիրումէ կենաց բաժակներ առաջարկելիս, քարոզներ խօսելիս կրկնել այս խօսքերը։ «պարտք մ'ալ ունիմ, այդ պարտքս ոիտի կատարեմ»։ Մի օր առաջ նա մտել էր Ս. Էջմիածնայ տաճարը, տաշուինք յոգնածութիւնը, յուզմունքը արգելք եղան, որ միաբանութիւնը լսեց Նորա խօսքերը, այսօր պիտի միաբանութիւնը ակնածութեամբ մօտենար Նորա Ս. Էջն տունելու, Նորա բերանից պիտի լսէր պատգամ։ Հրաման, Վեհափառը բարեհանեց կարճ խօսքերով յայտնել իւր հայեացքը միաբանութեան մասին, եկեղեցու մասին, ուստի խօսեց հետևեալը։

ԵՐԵԲՇԱՐԹԻ ԺԱՄԻ 7 ԵԽ ՎԵՀԱՓԱՌԻ ՃՈՌՔ ՏՈՃԱՐՈՒՄ.

«Օրչնեալ է Աստուած, հազար անգամ օրչնեալ։ Հորհակալեմ բոլորիցդ ալ Արբազան հարք, եղբարք և զաւակունք, ձեր չափազանց ընդունելութիւնէն։ Երէկ երբ Վեհարան մտայ, շատ կը մտածէի, լսի ինքս ինձ, չայրիկ, էսօր քո մուտքդ է, օր մ'ալ քո ելքդ պիտի ըլլայ. զի այսպէս է աշխարհիս հաշիւ, մուտքին ելք ալ կայ. Ժամագրքին վերջ կաթողիկոսաց ցանկ մի կայ, ես ալ ինկայ այդ ցանկին մէջ։ Կաթողիկոսներ կուգան, կերթան, այսօր ալ Խորիմեան չայրիկ եկեր է, օր մ'ալ

պիտի թողէ երթայ, զի մարդ աշխարհիս վերայ ապրելէն կրչոգնի. աղօթենք առ Եստուած, որ մեզ ամենքիս ալ արժանի լնէ երկնից նաւահանգստին:

Երուսաղէմ այսպէս կը նայէի քառասուն, յիսուն վարդապետներ կերևային աչքիս, իսկ այստեղ մէյ մը համբեցի քիչ երևացին, գուցէ պաշտօնով զանազան տեղեր գնացած են. բայց Ղափանցին կըսէ որ քիչը համով կլայ: Ե՞ն, ինչ և իցէ, սա ալ այսպէս, բայց աղօթենք, որ ինչպէս Քրիստոս եկաւ և յատակաղիծ որոշեց և իւր գծած յատակագծով սանդարամետին զլիսուն վրայ կառուցաւ այս սուրբ տաճար, այսուհետեւ ևս հաստատուն պահէ: Հաստատուն ըսածս աս քարերուն համար չէ, կը տեսնաք ահաւասիկ եկեղեցի չորս սիւներու վրայ հաստատած, վրան ալ կաթուղիկէ կայ, այդ տեսակ վանքեր շատ ունինք Հայաստան, բայց հաստատութիւն ըսածս այդ չէ, եթէ ներքին բարոյականութիւն չունենանք, հաւատարմութիւն, միաբանութիւն չունենանք, այն ժամանակ հաստատութիւն չի լինիր և այս կաթուղիկէն էլ վեր ի վար կըշընի:

Ինձ համար կաղօթէք, շնորհակալ եմ, ես ալ ձեզի համար կաղօթեմ, որ Եստուած մեզ ոյժ, կարողութիւն տայ, որ կարողանանք գործել, հաստատուն լինել. Եստուած օրհնէ և մեր ժողովուրդ. բայց գուք սրբազան հարք և եղբարք, սուրբ Վաւարան կը դնէք այսպէս (ցոյց է տալիս) ձեր կըրծքին վրայ և ժողովրդին կը հրամայէք թէ եկէք համբուրէք, բայց Վաւարան ի՞նչ կըսէ, «սիրեցէք

զմիմեանս» ես ալ ձեզ կլանմ նոյնը. սիրեցէք զմիմիանս, ապրեցէք խաղաղութեամբ: Շատ բան ունեմ ձեզ ասելու, խօսելու, դեռ շատ կը տեսնենք, զի ընդ ձեզ եմ, դեռ շատ կը խօսինք:

Այս համառօտ խօսքերից յետոյ, երբ վեհափառը գնաց վեհարան բոլոր միաբանութիւնը փիլոնները գցած գնաց նորան ներկայացաւ և լ. Ա. Ա. առաւ:

Կէս օրուայ կարճ ժամանակը բաւել էր Հայրապետին արդէն այնքան չանգստանալու, որ նա ներկայ եղաւ յիշեալ արարողութեանը և ապա սկսեց այլ և այլ տեղերից հաւաքուած պատգամաւորներին ընդունել: Նա ի մի հաւաքելով հեռու տեղերից, գիւղերից եկած ուխտաւորներին, օրհնեց նոցա, պահպանիչ ասաց և յօրդորեց, որ գնան իւրեանց տեղերը շարունակեն դադարած աշխատանքը: Ժողովուրդը վեհափառին տեսնելով իւր փափառքը կատարած համարելով հեռացաւ այդ օրը գոհ, ուրախ սրտով:

Չորեքշաբթի օրը՝ ամսի 17.ն վեհափառը իւր այցելութեամբ բաղդաւորացրեց ձեմարանի սաներին, որոնք ինչպէս արդէն յիշեցի, մեծ ժրաշանութեամբ և եռանգով պատրաստութիւն էին տեսել նորան հէնց եկած օրը ձեմարանի պարտիզով ուղի պատրաստել: ձեմարանի ուսուցչաց խումբը վերատեսուչ Արիստոկէս Եպիսկոպոսի հետ ընդառաջնելով նորին վեհափառութեանը ուղեկցեց նորան դէսլի հանդիսարանը, ուր բոլոր աշակերտները հառաքուած ալ, կարա. Մուրզայի դեկափարութեամբ եղացեցին մի քանի երգեր, ապա տեսլի օգնականը և մի աշակերտ ճառեր խօսացին: Վերջում երրորդ լսարանի Դանիէլեան Մարտիրոս երգեց պահդուխտի երգը. կոռունկ ուստի կուգասու, բայց այնպէս գեղեցիկ, այնպէս քաղցր ներդաշնակութեամբ, որ բոլոր հանդիսատեսները զգացուեցին, զգացուեց և ինքը Հայրապետը, որ ընդհատելով երգչին՝ յուզուած ձայնով մօտաւորապէս հետեւեալն ասաց.

Վեհափառ Հայրիկը լսելով պանդուխտի որտառու չ երգը, յի-

շեց իւր կեանքի տխուր դէպքերը, յիշեց իւր հիւանդութիւնը երուսաղէ մում իւր աշակերա երկու վարդապետների մահը նոյն աեղում բայց Ալրարատը, Ա Էջմիածինը տեսնելով Նա միիթարւումէ: Այդտեղ գտնումէ երջանկայիշատակ Գէորգ Դ-ի մեծանուն հիմնարկութիւնը, որի նպատակն է ազգի մէջ գիտութիւն, ուսում տարածել, որի մէջ պիտի պատրաստուին կը թուած քահանաներ, վարդապետներ: Խրառ է մինչև ձեմարանի հիմնարկութիւնն էլ ունեցել ենք բնտիր հօգևորականներ, բայց դոքա բացառութիւն են: Օրինակ այժմէլ են գնում օտար երկիրներ ուսում առնելու, բայց Մեսրոպներ, Եղիշէներ, Խորենացիներ չեն գուրս գոլիս: Նոքա գիտէին ոգևորութիւն ներշնչել իւրեանց աշակերտների մէջ, այժմէլ պիտի ձգտել դրան հասնելու: Նա օրհնեց ձեմարանը, քաջալերեց աշակերտներին և ուսուցչաց և յայտնեց, թէ ինքը անձամք պիափ շատ անգամ գայ ներկայ լինի գասերին: Այդ հիմնարկութիւնից պիտի դուրս գան ազգի հայրապետներ, ինչոք և նաև ամեն աեսակ հօգևոր պաշտօնեայք:

Դեռ Ա. Էջմիածին չհասած վեհափառ բարեհաճել էր իւր 0 ծման մեծաշուր հանդէսը կատարելու ժամանակը որոշել Սեպտեմբ: 26 հ: Վարագայ Խաչի տօնին: Այդպէս էլ յայտնուումէր ամեն հարցանդաց, սակայն վերջնական պաշտօնական վճիռը Նա կայացրեց ամսի 13-ին նախապէս տեղապահ սրբազնին և սինօգի անդամներին խորհրդի կանչելով և նոցանից տեղեկանալով թէ առանց մի որ և է դժուարութեան յարմար է պահպանել նշանակած օրը: Այդ վճռի հիման վրայ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանը հետեւալ բովանդակութեամբ հեռագրեր ուղարկեց ամեն տեղ ուր կան հայեր թէ պաշտօնական տեղեր, թէ մասնաւոր յայտնի անձանց, թէ լրագրութեանց խնդրելով յայտարարել ամենուրեք: «Ի գիտութիւն համայն հայ բարեպաշտ և ջերմեռանդ ժողովրդի՝ յայտարարեցէք, որ Նորին վեհափառութիւն կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. ՏԿԲՏիջ Ա. Ա. Զինի բարեհաճ անօրինութեամբ ներկայ թուի Սեպտեմբերի 26-ին, Վարագայ Խաչի տօնին նշանակուած է Էջմիածնում Խորին Արքութեան Ո. 0 ծումը»:

Ժամանակը խիստ կարճ էր՝ հեռագիր ստացողը հազիւ 11-ից մինչև 10 օր ժամանակ ունենար, բայց չնայած այդ հանգամանքին սպասածից աւելի թւով ուխտաւորներ եկան, նոյն իսկ Պարսկաստանի պէս երկրից բազմաթիւ ուխտաւորներ եկան և ճիշտ ժամանակին հասան։ Ուխտաւորների մեծամասնութիւնը եկել էր Ախալցխայից, Ախալքալաքից, Կարսից, Ալեքսանդրապոլից, Երևանից, այնուհետև բոլոր յայտնի քաղաքները ունէին իւրեանց բազմաթիւ ներկայացուցիչները։ Դոցանից նոքա էին բազգաւոր, որոնք խելացիութեամբ երեք չորս օր օծումից առաջ էին եկել որով թէ ճանապարհին համեմատաբար քիչ նեղութիւն էին քաշել և թէ այստեղ լաւ տեղաւորուեցին։ վերջի ուրբաթ և շաբաթ օրը եկողների համար վանքում այլ ևս տեղ չկար։

Մինչև օձմոն օրը Նորին Վեհափառութիւնը միջոց ունեցաւ անձամբ տեսնելու Ա. Էջմիածնի ներսը, շրջակայքը։ Նա կառք նստած պատեց անտառը, տեսաւ թէ ինչպէս ջրի պակասութեան պատճառաւ անտառը փշանալու վրայ է, այցելեց Ա. Շողակաթի, Ա. Հախովիմէի վանքերին, շնորհակալութիւն յայտնեց Արհատակէս և Երեմիա Եպիսկոպոսներին, որ նոքա այդ վանքերը իւրեանց խնամակալութեան տակ առաջ են, յորդորեց աշխատել վերանորոգել նոցա աւերակները և ազատել քայքայուելուց։ ոտով իջաւ նաև Ա. Գայիանէի վանքը, բարեհանեց տեսնել Բաստամեան վարդապետի շինած սհնեակները։ Եղաւ քանիցս լճի ափին, ուր կարողանումէր Նա ամրուի հետաքրքիր հայացքներից ազատ զրոնել, շնորհիւ նոր կառուցած շրջապարսպին։ Ամեն անգամ երբ յայտնւումէր, թէ Նորին Վեհափառութիւնը պիտի գուրս ելնէ, Վեհարանի առաջ, Վազարապատի մօտ հաւաքում էր բազմութիւն, լի վատիագով կրկին և կրկին անգամ տեսնել իւր Հայրապետի երեորդ Վերջին օրերը ժողովուրդը արգէն այնքան շատացել էր, որ Վեհափառութիւն այլ ևս ժամանակ և գիւրութիւն չէր մնացել շարունակել սովորական զրօսանքները, մանաւանդ որ շատ տեղերից պատգամութութիւններ էին եկել և ներկայանում էին առանձին առանձին։

Վերջի շաբաթ օրը ամսի 25 ին պատեղ հայտան նուև աէ-
րութեան ներկայացուցիչները կողկատի քաղաքային մասի կա-
ռավարչապետի՝ Ներկեմետե ի կողմից գաղտնի խորհրդական Պ. Պրի-
բիլը իսկ Երեանից նահանգապետ Ֆրեզէնը իւր օգնակա-
նով Գաղուց անմիջապէս յետոյ նոքա ներկայացան նորին Վեհա-
փառութեանը և որովհետեւ որոշուած էր այդ օրը ժամի 10-ն եր-
դումն կատարել կարգապահութեան համար Երեանից երկու գունդ
զօրք էր բերուել որոնք ժամի 9-ից սկսած հրացանները ձեռներին
Վեհարանից սկսած մինչև Տաճարի մուտքը կանգնեցին որպէս
զի գնացքը ազատ պահեն: Պատմումեն, որ ամեն անգամ այդ
տեսակ մեծ հանգէ ոներին զինւորներին չի յաջողուել ցանկա-
ցած կարգը պահպանել այս անգամ նոքա առանց գժուարու-
թեան կատարեցին իւրեանց պարտքը, որովհետեւ նոքա կանգ-
նած էին այն փայտեայ վանդակների յետեռում: որ շինուած էր
այս տարի Երեմիա որբազանի ձեռքով բակի պարտիզի շուրջը: Ամ-
բովոր կուտակուելով այդ պատճէցի առաջ մնում էր կանգնած
և ազատ թողնում լայն ընդարձակ մուտքը:

Վեհափառի դուրս գալուց առաջ հաւաքուեցին բոլոր միարան-
ները և Վեհարանի անցքի երկու կողմին շարուելով սպասում էին
նորան: Ժամի 10-ին Վեհափառը դուրս եկաւ Վեհարանից, հոգեո-
րականները առաջ անցան, վերջից Վեհափառը, որին հետեւմ
էին տէրութեան ներկայացուցիչները, այլ և այլ քաղաքներից
ու հաստատութիւններից եկած պատգամաւորները, պատուաւոր
հիւրերը. միայն գոքա ներս մտան եկեղեցի: Տաճարի մէջ, Խ-
ման տեղի առաջ հանգիստաւոր կերպով Վեհափառը կարդաց այն
երդման բնագիրը, ըստ որում Նա ուխտումէ հաւատարիմ
հպատակ լինել իւր կայսերը: Երդման թուղթը ստորագրեց Են-
քը, Սինօղի անդամները, և Սինօղի պրօկուրօրը: Արարողու-
թիւնից յետոյ նորին Վեհափառութիւնը հետեւալը խօսեց:

«Աս երդմնաթուղթէն առաջ մեք ուրիշ երդում մ'ալ
ըրած ենք, երբ վարդապետ պիտի ձեռնազրուէինք:
Վ. յն ժամանակ մենք երդում ըրած ենք հաւատարիմ

լինել ս. Աւետարանին։ Գիտէք, նախ քան այս
երդումն Յիսուս Խւր Աւետարանով Պօղոս խւր
թղթով պատուէք տուած են բոլոր հաւատացելոց
ցոյց տալով թէ Խշանութիւն Ասուուծմէ է. պարտ
է հնազանդել իշխանութեան։

Կարգումենք Աւետարանին մէջ. երբ միանգամ
հուվմայեցի հարկահաններ Պետրոսին ասին ձեր
վարդապետ հարկ չի տար. Յիսուս Պետրոսին ա-
սաց թէև որդիք թագաւորաց ազատ են. և Խնքն
իսկ երկնից չօր Թագաւորին ազատ որդին էք, բայց
գայթակղութիւն չը տալու համար հրամայեց որ-
սորդ Պետրոսին, որ երթայ ձուկ որսայ և ձկան
փորէն մի արծաթի սատեր հանելով վճարէ խւր և
Պետրոսին հարկ։ Չգիտենք թէ այդ արծաթի սա-
տեր նորապէս հրաշագործեց ձկան փորին մէջ, թէ
դիպուածով ծովու մէջ ընկած էք ձուկ կուլ տուած
էք և Պետրոս վրայ հասաւ։ Այսպիսով օրինակ
տուառ մեզ Յիսուս թէ պարտ է տէրութեան օրի-
նադրած հարկ պարտաւորապէս վճարել։ Յիսուսի
ոսովներ երբ փորձելով կը հարցնէին, թէ արժան
է հարկս տալ Կայսեր. ‘Եա իսկոյն ասաց ցոյց տուէք
ինձ մի դահեկան և հարցուց ոյր է այս պատկեր.
երբ պատասխաննեցին թէ Կայսեր. գնացէք ուրեմն
տուք զԿայսերն Կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ։
Թաղունք դրամական հարկ. մեք պարտական ենք
նոյն իսկ մեր արիւն և կեանք նուիրել կայսերական
երկրին և հայրենեաց համար։’

Խսկ ինչ որ Աստուծոյն և եկեղեցւոյն կը վերա-
բերի զայնես սուրբ ուխտիւ անեղծապէս պահել

իբրև հաւատարիմ տնտես Եկեղեցւոյ: Օմէպէտեայս թուղթ միառմի կը յիշեցնէ ինձ իմ հպատակութեանս պարտականութիւններ. սակայն իմ հոգեոր բարձրագոյն պաշտօն այլ ևս կը յաւելու յիմ վերայ աւելի ևս բարձրագոյն առաքելական պարտիք. այն է հաւատացեալ Եկեղեցւոյ զաւակներուն քարոզել Վւետարանին համատարած սէր. բուռն սիրով ջանալ որ կրօնն և աստուածպաշտութիւն կենդանի մնայ ժողովուրդի սրտին մէջ վասնզի այդ է միայն, որ հաւատացեալ ժողովուրդներ հնազանդ կը պահէ երկնից Հօր առաջ և հաւատարիմ հպատակ կը շինէ զիրենք աշխարհիս տէրութեան օրինաց առաջ:

Որչափ Խորիմեեան Հայրիկ Վմենայն Հայոց Կաթուղիկոս է, իբրև հաւատարիմ աշխակերտ Քրիստոսի պիտի աշխատի Քրիստոնէական կրօնի սուրբ Պգացումն տարածել իւր ժողովրդին մէջ, պիտի աշխատի, որ Հայոց զաւակներ Ճշմարիտ և անկեղծ Քրիստոնեայ լինին: Վ ասն զի ամէն ազգաց Քրիստոնեայ հաւատացեալներն, եթէ Վւետարանի հոգին ըմբռնելով Ճշմարիտ Քրիստոնեայ չը լինին: Եթէ հազար անդամ երդուին, նոցա երդումն մի կեղծաւորութիւն կը լինի: Աւստի ոչ միայն ես, այլ և համայն ուխտ սուրբ Խջմիածնի թէ սրբազնն եպիսկոպոսք և թէ վարդապետք պիտի աշխատեմք, նոյն Վւետարանին ոգին քարոզել թէ եկեղեցիներում և թէ դպրոցներում:

Այդ խոռքերից յետոյ Վեհափառք երեսը գարձրեց գէպի Խջման տեղը և խիստ յուզուած ձայնուի աղօթեց.

Դու, Տէր, Վմենակալ Վստուած, որ գիտես քըննել մարդոյ ծածուկ սիրտ և երիկամունք իմ, սիրոս բաց է Քո առաջ. ես չեմ կարող կեղծել և ստել կաղաչեմ Քո տաճարին մէջ Խաչին և Վւետարանին առաջ տուր ինձ Քո շնորհ և զօրութիւն, որ կարենամ իմ ծանր ծանր պարտականութիւններս

Ճշութեամբ կատարել. իբրև Հայոց Եզրի Հայրապետ։ Տուր ինձ նաև Վո հզօր արդարութեան և ճշմարտութեան Հոգին, որ պատրաստ լինիմ կատարել Վո այն մեծ պատուէրն՝ տալ Եստուծոյն՝ Եստուծոյ և Կայսերին Կայսեր։ Եմն։

Նա դարձաւ դէպի ժողովուրդը և ասաց «ամենքդ ասացէք ամեն,, . իսկ Պրոկուրորին, ասաց. «Պրոկուրոր, ըսածներս Ճիշտ, բառ առ բառ կթարգմանես» և նոյն հանդէսով ինչպէս եկել էր, դարձաւ վեհարան։ Այդ օրը Վեհարանի դահլիճում ճաշ կար բարձրաստիճան և պատուաւոր հիւրերի համար։

Հասել էր օրը երբ պիտի լրանար մի շաբք հանդիսաւոր ձեւակատարութեանց շղթայի վերջին օղակը. ազգը ընտրել էր, կայսրը հաստատել էր, բայց զեռ պակաս էր եկեղեցու, կրօնի նուիրագործութիւնը։ Մեր եկեղեցական հանդիսակատարութեանց մէջ օծման և ձեռնադրութեան հանդէսները խիստ փառահեղ են ամեն տեսնողի վրայ նոքա թողնումեն խոր մնայուն տպաւուրութիւն, երանի այն հային, որ արժանանումէ տեսնելու նոցանից մէկը. այդ յուսով հազարաւոր ուխտաւորներ են գալիս իւրաքանչիւր անգամ, կաթուղիկոսաց ձեռնադրութեան միւռոն օրհնութեան ժամանակ, բայց անչափ բազմութիւնից գուցէ հարիւրից մէկին է յաջողւում շքեղ արարողութեանը ականատես լինել։ Այս անգամ այդպէս չէր։ Վեհափառը ի նկատի առնելով, որ տաճարի փոքրութեան պատճառաւ, հասպակութեան մեծագոյն մասը պիտի զրկուէ հանդիսից, կարգադրեց, որ օծումը դուրսը կատարուի։ Զանգագատան արեմտեան մուտքի առաջ շինուեց տախտակներից մի ամրիոն, որի վրայ պիտի կատարուէր օծումը, իսկ ժողուրդի մի մասը բակում մնաց կանգնած, միւս մասը տեղաւորուեց Վեհաբանի, մատենագարանի, եպիսկոպոսների բնակարանների կոթուրի վրայ և այդ եղանակաւ հազիւ թէ գտնուէր մէկը, որ զրկուէր հանդէսը տեսնելուց։

Հայրիկը իւր պարզասիրութեամբ չընդունեց, որ միաբանները ըստ հնաւանդ սովորութեան հանդիսաւոր կերպով ուղեկցեն Նորան դէպի տաճար, ուստի Նա, բացի երեկոյեան ժամերգութիւնց, առաւօտեան ժամերին և թէ պատարագին տաճար եկաւ առաջից շաթիրները, իսկ հետեւից միայն իւր գաւազանակիր վարդապետին ուղեկցութեամբ։

Պատարագիչը ինքն էր։ Արարողութեան հանդիսաւորութիւնը այն բոպէից սկսեց երբ Հայրապետը զգեստաւորուած թանկագին զգեստներով գուրս եկաւ խորանից, նոյնպիսի զգեստաւորութեամբ հետեւումէին Նորան տաճներկու եպիսկոպոս, շապիկ հագած վարդապետներ, և սարկաւագներ։ Պատարագիչը ոսկեայ փուռվարով խնկարկելով բարձրացաւ ո. Աստուածածնայ սեղանը, որի երկու կողմերում շարուեցին բոլոր եպիսկոպոսները ըստ աւագութեան կարգի՝ վեց, վեց այսպէս Աւագ Կողմում Սմբաթեան Արքեպիսկոպոս, Աղուանեան, Ներսէս, Սուրէնեան, Դաւթեան, Տէր-Գասպարեան եպիսկոպոսները, սոցահանդէպահ Տեղապահ Երեմիա Եպիսկոպոս, Սուքիաս, Յովհաննէս, Արիստակէս, կարապետ և գառնակերեան եպիսկոպոսները։ Երգումէին պ. Շահլամեանը և Կարա-Մուրզայի պատրաստած ճեմարանական խումբը։ Տաճարում ժողովուրդ քիչ կար, դիտմամբ ժողովուրդ քիչ էր ներս թողուած որպէս զի հանդիսով ներս ու գուրս գալիս գժուարութիւն չլինէր։ Ըստ սովորութեան Ապատարագը կատարուեց մինչեւ «Զի ողորմած և մարդասէր ես», և ապա Վեհափառ Հայրապետը երեսը գէպի սեղան դարձրած ծունկ չոքեց և երդուեց։ «Վկրտիչ ծառայ Քրիստոսի և Եպիսկոպոս Գլակայ վանուց միաբան Սրբոյ Ուխտիս Եջմիածնի, կամօքն Աստուծոյ, և ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ յԵյրաբատեան Եթոռ Կաթողիկոսութեան Եմենայն Հայոց, ապաւինեալ յօդնականութիւն նորհաց բարձրելոյն՝ խոստանամ և ուխտեմ առաջի սրբոյ սեղանոյս և աստուածընկալ ո, նշա-

նացս, յանձն առնուլ զպաշտօնս ղայս Եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ և զբոլորապտուղ նուիրմամբ ընծայել ղանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց և կաթողիկոսական պարտուց և առաջնորդել ազդիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոսական կրօնից, ըստ գրոցս եկեղեցւոյ դաւանութեան և ըստ հայրապետական կարգաց և կանոնաց Եստուածալաշառութեան, անստերիւր և անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ Յաջորդաց սրբոց առաքելոցն Օռադէոսի և Յարդուղիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Եթուոյս Հայաստանեայցս » : Երդումից յետոյ գարձաւ գէպի արեւմուտք և մնաց ծնկաչոք, յուզուած, գլուխը խռնարհած և Եպիսկոպոսները շարունակեցին արարողութիւնը: « Զողորմութիւն քո Տէր յաւիտեան » սաղմոսից յետոյ, Երեմիա եպիս. ասաց « Աղաչեսյուք զմարդասէրն Աստուած վասն ծառայի իւրոյ » քարոզը և ապա ձեռին բռնած ս. Միւռոնը տուաւ Մեարովակ Արքեակ. որ մօտենալով Հայրապետին տասներկու « Տէր ողորմեայից » յետոյ ասաց. « Աստուած սյին և Երկնաւոր շնորհն, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՄԿԲՏԽԶ ԱրքԵՊԵՍՈՊՈՍ ՎԱՆՈՒՅՆ ԳԼԱԿՈՅ յԵպիսկոպոսութենէ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն և յԱռաջնորդութիւն ընդհանուր ազգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեանս » : Բոլոր Եպիսկոպոսները մօտենալով շրջան կազմեցին և ձեռները դնելով ընտրեալի գլուխն ասացին. « Մեք դնեմք ձեռս ի վերայ, և ամենեքեան աղօթս արարէք, զի արժանաւոր լիցի սա զիշխանութիւն Առաքելական Աթոռոյս ա-

նորատ պահել առաջի Աստուծոյ» : Ամեն մէկը գնաց իւր տեղը
Մեսրոպ Արքեպ. կարդաց «Գոհանամք զքէն Աստուծած մշտնջենա-
ւոր...» ազօթքը: Ազօթքից յետոյ եպիսկոպոսները կարգով կար-
դացին ընթերցուածներ և Աւետարանը: Ընթերցուած յԵլից Խօ-
սեցաւ Տէր ընդ Մալուէսի (Սուքիաս), Ընթերցուած յԵրկրորդ
թագաւորութեան. Եւ եկին ամենայն ծերքն իսրայէլի... (Յով-
հանինէս), Ընթ. յԵղեկիէլէ մարգ.՝ Եւ եղիցի ի մտանել քահս-
նայից ընդ դուռն. (Ազուանեանց). Ընթերց. յԵսայեայ մորգա-
րէէ. Բայց դուք քահանայք Տեառն. (Սարգիս). Պետրոսի Առա-
քելոյն ի կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. Ի
բաց թոթափել այսուհետեւ զամենայն չարութիւն. (Դութեանց).
Մատթէոսի Աւետ. Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ
Կեսարիայն: (Կարապետ եպիս.): Այսուղից Վեհափառ պատա-
րագիւը գարձեալ շարունակեց Ս. Պատարագը մինչեւ ողջոյնը:
Գառնակերեանը ասաց Հաւատամքը և վերաբերումն ա-
րաւ: Մինչ եպիսկոպոսները երգում էին «Աստուծած մեծ,
քարոզը Հայրապետը եկեղեցական թափորով տաճարից
դուրս եկաւ և օծման մնացեալ մասը կատարուեց զան-
գակատան առաջ ի տես բոլոր ժողովրդեան: Գարձեալ
նոյն կարգով ինչպէս սեղանի վրայ՝ շարուեցին եպիս-
կոսուները Կաթուղիկոսը ծունկ չոգեց և Մեսրոպ արք-
եպիսկ. կարդաց «Տէր Աստուծած արարիչ ամենայն ա-
րարածոց»: Երկար ազօթքը և Երեմիա եպիսկոպոսի ձեռից
առնելով սրբազնութեանը օծեց Նուիրեալի գլուխը, բոլոր ե-
պիսկոպոսները կրկին շրջան կազմեցին և բութ մոտը Նորո գա-
գաթին դնելով ասացին «Օրհնեսցի օծցի և սրբեոցի գոգաթն
Տէր Մկրտիչ Կաթուղիկոսին...» ճինչ բամբակ գնելով օծեալի
գլուխն սպիտակ թափանցիկ քողով ծածկեցին Երեսը. արարո-
ղութիւնը վերջացած էր, Վեհափառը կանգնեց: Գժուար է ա-
ւելի փայլուն տեսարան Երեւակայել, Երբ Հայրապետը չո-
գած, հոգով զգալով կոչման վեհութիւնը արտասուը էր թա-
փում աչքերից, Երբ Հաղարաւոր Հանդիսատեսներ շունչերը
կորած, լուռ մունչ աչքերը դէպի մի կէտ դարձրած նա-

յումէին, և երբ արարողութիւնից յետոյ ամբոխը մեծաձայն հետեւլով ներքին ձայնին, կոչեց միաբերան. «Կեցցէ Հայրիկը, կեցցէ Հայոց Հայրապետը»։ Շատերի աչքերին կարելի էր արտասուք նկատել, բայց այդ ուրախութեան ցնծութեան արտասուք էին։ «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից»։ և «Որք աքժանաւորեցաք»։ և «Տէր Հովուեսցէ» Սաղմօսից յետոյ գուրսը կարդացին Պետրոսի կոթուղիկեայ առաջի թուղթը (Արիստակէս եպիսկոպոս) և Յովհաննու Աւետարանը. «Եւ իրրե ճաշեցին...» (Կարապետ եպիսկոպոս) թափորը մտաւ տաճար, ուր շարունակումէր պատրագը. բոլոր եպիսկոպոսները համբուրեցին Հայրապետի գլուխը և ողջոյն տուին ժողովրդեան։ Պատարագից յետոյ բոլոր եկեղեցական գասը ըստ ընդունուած սովորութեան զգեստաւորուած առաջնօրգեցին Նորին Վեհափառութեան գէպի Վեհարան և ծաղկեայ գահնիճում բազմեցուցին Կաթուղիկոսական Աթոռի վրայ, ուր նա պահպանից ասաց և բոլոր համբուրելով Ա. Ա. Ը Հեռացան։

Այդ օրը վաճքի սեղանատան հանդիսաւոր ճաշ կար, ներկայ պիտի լինէր Նորին Վեհափառութիւնը։ Հիւրերի թիւը այնքան շատ էր, որ շատերը գուրսը մնացին. իսկ վարդապետներից ոմանք ոտքի կանգնած։ Ոեղանատան գլխին, Վեհափառական գմբէթի տակ բազմեց Հայրապետը, աջ կողմում աշխարհուկան հիւրերը, ձախում հոգեւորականները բատ աւագութեան։ Առութեամբ ճաշումէին, երբ Նորին Վեհափառութիւնը պատուիրեց բաժակները լցնել և յոտնկայս առաջարկեց Ռեծազօր Կայոր Աղեքսան դք Եռորդի կենացը մոտաւորապէս այս խօսքերով։

«Ակսած այն օրէն, երբ ես ոտք դրի Ոռուսիոյ հողին մէջ, այն է Օդեսայէն սկսած, չեմ դադրեր օրհնել մեր Կայսեր կեանք։ Այսօր մեզ համար մեծ տօն է, Վարագայ Խաչին տօնն է, որ սուրբ կպահէ մեր եկեղեցին, այսօր մեր եկեղեցու և աղքի համար մեծ է նրանով ևս, որ երկու տարիէն

աւելի սպասելէն զինի իրենց համար կաթուղիկոս օծուեց, աղջը կընտրէ Կաթուղիկոս, բայց Կորին Կայսերական մեծութիւնն է, որ կը վաւերացնէ, ազգին ընտրութիւնը: Այժմ այլ ևս այնպէս չէ, ինչպէս Քրիստոսի ժամանակ, որ պարզապէս կըսէր իւր աշակերտներուն. «գնացէք քարողեցէք զամենայն հեթանոսաց..» այժմ ամեն բան օրէնքով, ձեռով է, Կայսրն է, որ մեզ հաստատեց և մենք ալ այսօր օծուեցինք Եմենայն Հայոց Կաթուղիկոս:

Ուստի կառաջարկեմ խմենք այս բաժակ Կայսեր կենաց համար, Վստուած օրհնէ Կյրա կեանք, օրհնէ Կյրա ամուսին, Գահաժառառանգ և ամեն Պարագայք: Կայսեր կեանք ժողովրդի կեանքն է, Կայսեր ողորմած, արդարասէր հովանաւորութեան տակ խաղաղ կապրէ իմ ժողովուրդ և կյառաջադիմէ: Օրհնեալ ըլլայ Կայսր»:

Բոլոր սեղանակիցները յատնկայս կեցցէներ և ուրաներ կանչեցին և լոեցին «Տէր պահեսց զկայորն մեր» հիմնը, որ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգեց ձեմարանական խումբը:

Երիբորդ բաժակը առաջարկեց Նորին Վեհափառութեան կենացը գաղտ. խորհ. Պրիբիլը այս խօսքերով.

«Զերդ Արքութիւն. Կոմիտասի քաղաքական բաժնի կառավարչապետը Շերեմետելը, լիազօրութիւն տուաւ ինձ շնորհաւորել Զեր 0ծումը և ցանկալ Զեղ երկար ժամանակ կուավարէլ Զեր խնամոց յաճճեած հօտը ուստի խմեւմ եմ Զեր կենացը: Թարգմանեց Երևանի քաղաքագլուխը: Կ՛նացը հետեւցին ոգեսորուած կեցցէներ. իսկ ձեմարանի ուսուցիչ Պ. Պալեանը այդ կենացի վրայ կարդաց իւր խրթին գրաբառ լեզուով գրած ուղերձը, որը տպած էր ոսկեաց տառերով սպիտակ աթլասի վրայ Նորին Վեհափառութեանը ներկայացնելու համար: Երգեցիկ խումբը երգեց մի երգ, որ գրած էր գարձեալ Պ. Պալեանը

Վեհափառի գալոտեան առթիւ, իսկ ձայնագրել էր Պ. Կորա-
Մուրզան:

Սրանից յետու Նորին Վեհափառութիւնը առաջարկեց մարմ-
նաւոր իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչների կե-
նացները, որոնք ընդունուեցան հանդիսականներից ոգեօրու-
թեամբ և կեցցէներով:

Վեհափառը պատուիրումէ Պ. Շահամեանին մի բան երգել.
Պատրաստ եմ Վեհափառ Տէր, բայց աւելի ուրախութեամբ
մի կենաց բաժակի վրայ կերպէի»:

Վեհափառը կանչումէ Արխոտակէս եպիսկոպոս Անդրակեանին
և առամ «Արիստակէս սրբազն, այս մեր բարեկա-
մը կըսէ առանց կենացի չեմ երգեր, գնա կենաց
մառաջարկէ, խառնէ իրար հետ Խջմիածին, միա-
բանութիւն, Երարատ, Երաքս»:

Սրբաղանը իր տեղը գնալով խօսումէ.

Այս ուրախութեան հանդէսը կրկնուել է մեր ազգային
կեանքի մէջ, եթէ չեմ սխալում 151 անգամ: Մայր Աթու-
ուը 16 դար շարունակ գոյութիւն ունենալով, այնպէս բարձր
պահպանել է իւր գիրը, որ յաջողել է սիրով միացնել, կապել իրեն
հետ բոլոր հայերին: Հայ ժողովուրդը իւր նեղ վիճակների մէջ
անգամ, երբ առիթ է ունեցել հաւաքուելու Ա. Խջմիածնում:
այսուղ գոնել է միշտ մսիթարութիւն, սիոնիանք, կազդու-
րուել է հոգեպէս և բարոյապէս: Այսօր ևս նա մսիթարուումէ,
ցանկանք որ մեր Մայր Աթուը միշտ և հանապաղ մեր ազգի
համար պահպանի այդ նշանակութիւնը, կեցցէ Մայր Աթուը,
կեցցէ և Միարանութիւնը ի փառս ազգին մերոյն:

Կեցցէներ: Շահամեանը երգումէ Տէր կէցո գու զհայտ...
Վեհափառը առաջարկումէ չորրորդ բաժակ:

«Ես քիչ մը մոռացկուս եմ, շատ անգամ մեծ բա-
ներ կմոռանամ: Կատած կմտածէի և միտքս եկաւ թէ
ինչպէս կաթուղիկոս եղայ, 12 հատ բութեր էին որ

մեր սրբազնները գագաթուս վրայ դրին, լաւ ճմիցին: Եայց զլուխս ալ աղատուեց, ասկէ ետք մէկ էլ այն ժամանակ բութ կղնեն վրաս, երբ ոչինչ չպիտի զգամ; այն ատեն ճակատիս վրան ալ բութ պիտի դնեն, ձեռներուս վրան ալ: Ուրեմն եթէ Կայսեր հաստատութիւն չլինէր, եթէ սրբազններու բութը չլար, ես կաթուղիկոս չէի դառնալ: Վսկէց ետքը հերթն ինձ եկաւ ես ձեր գագաթներուն վրայ պիտի բութ դնեմ: բայց միք վախնալ, Վստուած Հայրիկին այնպիսի հեղ հոգի տուեր է, որ նա պիտի խաղաղութիւն պահպանէ: Չեր կեանք պիտի միախառնուի Հայրիկի կեանքի հետ, ազգը մեզմէ շատ բան կսպասէ, այնպէս ընելու է, որ ազգ մեզի օրէնէ, չանիծէ: Հայ ազգ անիծել ալ զիտէ և անոր անէծք աւելի կազդէ. Նա մեղ իւղ, ցորեն չի տար, քաղցած կմնանք:

Վստուած ձեղ երկար կեանք տայ, որ միացած աշխատենք ազգիս համար»:

Աշակերտները երգեցին: Մեսրոպ արքեպիսկոպոսը մի քանի խօսքով ընդհանուրի կողմից շնորհակալութիւն է անում: Ահա համար քիչ փոփոխած նրա խօսքերը ի լուր ամենեցուն կրկնումէ: « Ժողովուրդ, զիտէք սրբազնը ինչ ուզեց ըսել. անի ըսաւ, թէ ժողովուրդ վկայ եղէք, որ մենք խօսք ենք տալիս միացած ուժով զործել յօդուտ ազգի»:

Աերջին խօսութ կարապետ եպիսկոպոս Արքազեանն էր և արագ մօտաւորապէս հետեւեալը.

Թէ՛ւ Դուք յայտնեցիք, թէ մեր բութերը Ձեղ Կաթուղիոս արինս բայց Դուք սրբանացել էք այդ մեծ պատուին Աստուածանից: 40 տարուց ի վեր է Դուք Ձեր գործերով յայտնի էք

Հայ ժողովրդին «Հայրիկ» պահծալի անունով, ուստի նա զեղ գնահատեց, ճանաչեց Զեր մէջ վերականգնած մեր Նախկին Լուսաւորիչներին, ուստի ընտրուած էիր Զեր մեծ յատկութեանց համար։ Կեցցէք, կեցցէք։

Խումբը երգումէ Պ. Աղայեանի Հայրիկի համար գրած երգը։ Երկու և կէս ժամին վերջացաւ ճաշը և Վեհափառը օրհնելով սեղանը գնաց հանգստանալու։

Մեծ հանդիսի առթիւ երեկոյեան դարձեալ տեղի ունեցաւ հրախաղութիւն, երգումէին ձեմարանի սաները. նուագումէր զինւորական խումբը։

ՄԵԽՐՈՊ ԱԲԵՂԱՅ ՏԵՐ. ՄՈՎՍԵՍԵԱՆՑ.